Մեծ Մանթաշ

Վարչական ղեկավար՝ Նարեկ Մկրտչյան

Հեռ: 077 81 37 81

Մակերես՝ 27,6կմ²

Բնակչություն՝ 2250

Ինդեքս՝ 3016

metsmantash.shirak@mta.gov.am

Մեծ Մանթաշը գտնվում է Հայաստանի Շիրակի մարզում, Արթիկ համայնքի վարչական շրջան է, Արթիկից գտնվում է 10, մարզկենտրոն Գյումրիից 29 կմհարավ-արևելք, մայրաքաղաքից (Երևան) 90 կմ հյուսիս-արևմուտք, Մանթաշ գետի հովտում: Մեծ Մանթաշ համայնքը հիմնադրվել է 1820-ական թվականներին՝ Արևմտյան Հայաստանի Բասեն գավառի Խորասան գյուղի գաղթականների կողմից: Բնակավայրը ծովի մակերևույթից բարձր է 1960 մետր, բնակավայրը ընդգրկված է հանրապետության բարձր լեռնային գոտիների ցանկում, առանձնահատուկ են ցուրտ, խստաշունչ, ձյունառատ ձմեռներ և զով ամառային եղանակները: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերայինկուլտուրաներիմշակությամբ: Գյուղնունի 1884 թ.-ին կառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցի, «Սրբատեղ» և Սուրբ Սարգիս մատուռներ: Հիմնականհոդված՝ Մանթաշ կամավորական ջոկատ Արցախյան առաջին պատերազմին Մեծ Մանթաշի բնակիչներից մասնակցել է մոտ 30 մարդ: Պատերազմի սկսվելուն պես գյուղացիները սկսում են կամավորագրվել և մեկնել ռազմաճակատ: 1990-

ին գյուղում կազմավորվել է «Մանթաշ», կամավորական ջոկատը։ 1992-ի հունիսից ներառվել է Հատուկ գնդի Ապարանի վաշտի, 1994-ին՝ որպես առանձին վաշտ՝ գնդի 1-ին գումարտակի կազմում։ 1990- 94-ի նջոկատը, վաշտը կամ նրա առանձին խմբեր մասնակցել են ՀՀ Նոյեմբերյանի և ԼՂՀ Լաչինի շրջանների, Բեղլաձորիեն թաշրջանի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին։ Ջոկատից ՀՀ «Արիություն» մեդալով պարգևատրվել է 4, «Մարտական գործողությունների համար»՝ 10, «Մարշալ Բաղրամյան-100»՝ 20 և ԼՂՀ «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» հուշամեդալով՝ 6 ազատամարտիկ։ Արցախյան առաջին պատերազմին Մեծ Մանթաշը տվել է երեք զոհ՝ Հայկ Արամի Գալստյան, Սամվել Ալբերտի Եղոյան և Արայիկ Լենվերի Եղոյան։ ՇիրակիմարզիՄեծՄանթաշգյուղն 2016թ. ապրիլյան Քառօրյապատերազմին երեքհերոսէտվել՝ ԱրգիշտիԳաբոյան, ավագլեյտենանտ ԲենիամինԵղոյան՝Մոնթե, սերժանտ ԱրմանԱնդրեասյան Համայնքում կա 18-րդ դարի սկզբներին կառուցված «Սուրբ Աստվածածին» քաղաքատիպ եկեղեցի։ ՄեծԵղեռնի 100-ամյակի կապակցությամբ համայնքի կենտրոնում տեղադրվեց խաչքար հուշարձան կոթող։